ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ժամը 4-ին, Հոգևոր Ճեմարանում բանախոսեց ուխտավորաբար Ս. Էջմիածին եկած ծանոթ բանաստեղծ Վահե-Վահյանը՝ «Սփյուռքահայ գրականությունը» թեմայի շուրջ, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

Բանախոսության վերջում վերատեսուչ սրբազանը շնորհակալություն հայտնեց պր. Վահե-Վահյանին՝ նրա շահեկան բանախոսության համար։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և հավուր պատշաճի քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթաբյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 6-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանում, հերթական դասախոսության ժամին, բանախոսեց գրագիտուհի տիկին Սիրան-Սեզա Քյուփելյանը, «Կրոնը իբրև կոչում և իբրև ասպարեզ» թեմայի շուրջ։ Բանախոսությունը լսվեց մեծ հետաքրքրությամբ։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 9-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում Վեհափառ Հայրապետը, դերապատիվ Տ. Մամբրե արքեպիսկոպոս Սիրունյանի խարտավիլակությամբ, եպիսկոպոս ձեռնադրեց հոգեշնորհ Տ. Գնել ծայրագույն վարդապետ Ճերեճյանին, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության Տեղապահ ամենապատիվ Տ. Խաչ արքեպիսկոպոսի գրավոր միջնորդագրի հիման վրա։

Նոյեմբերի 19-ին նորապսակ Տ. Գնել եպիսկոպոսը Մայր Տաճարում մատուցեց իր անդրանիկ պատարագը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Ավագ Սեղանի վրա պատարագեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանա Մկրտչյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետը՝ «Ես եմ ճանապարհ, ճշմարտություն և կեանք» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, առավոտյան ժամը 11-ին, Վահափառ Հայրապետին այցելեց չեխ հայտնի գիտնական և հայագետ պրոֆ. Ցարոմիր Եղլիչկան։

Վեհափառ Հայրապետը սրտագին զրույց ունեցավ չեխ հայագետի հետ՝ հայ մշակույթի վերաբերյալ հարցերի շուրջ։

Հարգելի հյուրը ապա այցելեց Մայր Տաճարը, եղավ հնագիտական թանգարանում, Հոգևոր Ճեմարանում։ Վերջում պրոֆ. Ցարոմիր Եղլիչկան Մայր Աթոռի ոսկեմատյանում հայերեն գրեց հետևյալը. «Խոր զգացմունքով և խոր հարգանքով կանգնած եմ Ս. Աթոռի Տաճարում, որ աշխարհի բոլոր հայերի հոգևոր կենտրոնն է։ Շատ շնորհակալ եմ, որ հնարավորությունը ունեցա էջմիածինը և Վեհափառ Հայրապետին տեսնելու և անձամբ զրուցելու։ Վեհափառին քաջառողջություն եմ ցանկանում»։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ՀԻՆԳՇԱԲԹԻ, ժամը 1-ին, Հոգևոր Ճեմարանի հայոց լեզվի և գրականության դասախոս պր. Պարգև Շահբազյանը բանախոսեց «Շիրվանզադեն» թեմայի շուրջ, մեծ վիպասանի ծննդյան 100-ամյա հոբելյանի առիթով։ Հարգելի բանախոսը գեղեցկորեն ներկայացրեց մեծ գրողի գրական վաստակը, հանգամանորեն

կանգ առնելով Շիրվանզադեի բազմակողմանի և հարուստ գրական ժառանգության վրա։ Վերջում վերատեսուչը խորին շնորհակալություն հայտնեց հարգելի բանախոսին՝ այդ գեղեցիկ ու շահեկան դասախոսության համար։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-ԻՆ, ՈՒՐԲԱԹ, «Ընծայումն Ս. Աստուածածնի ի Տաճարն»։

Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Հակոբ քահանա Քելամյանը և օրվա տոնի մասին քարոզեց լուսարարապետ գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոսը։

Նույն օրը, ժամը 2-ին, Վեհարանում կայացավ մանկավարժական խորհուրդ, Վեհափառ Հայրապետի բարձր նախագահության տակ, մասնակցությամբ Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական ամբողջ կազմի։

Քննության առնվեցին Հոգևոր Ճեմարանի ուսումնական պլանի, ներքին կարգապահության, ուսանողության, աշխատասիրության, կազմակերպված սերտողության վերաբերյալ հարցեր և ընդունվեցին համապատասխան գործնական որոշումներ։

Մանկավարժական խորհրդակցությունից հետո, ժամը 3.30-ին, Վեհափառ Հայրապետը բարեհաճեց Իրեն սեղանակից դարձնել Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական ամբողջ կազմին։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց Տ. Հակոբ քահանա Հակոբյանը և քարոզեց հոգեշնորհ Տ. Հուսիկ աբեղա Սանթուրյանը՝ «Հայր մեր» բնաբանով։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ, ՇԱԲԱԹ, «Տօն Սրբոց Առաքելոց և առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի և Բարթողիմէոսի»։

Մայր Տաճարում, օրվա եկեղեցական մեծ տոնի առիթով, պատարագեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-ԻՆ, ՇԱԲԱԹ, հետ միջօրեի ժամը 1.30-ին, Հոգևոր Ճեմարանի հանդիսությանց սրահում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ՝ նվիրված Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 38-րդ տարեդարձին։

Հանդիսավոր նիստին ներկա էին Մայր Աթոռի ամբողջ մրաբանությունը, Հոգևոր Ճեմարանի տեսչական և դասախոսական կազմը, ուսանողությունը, Մայր Աթոռի ողջ պաշտոնեությունը։

Հայաստանում Սովետական կարգերի հաստատման 38-րդ տարեդարձի ազգային մեծ տոնի պատմական նշանակության մասին բովանդակալից և գեղեցիկ զեկուցումով հանդես եկավ Հոգևոր Ճեմարանի դասախոս պր. Գրիգոր Գյուլյանը։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-ԻՆ, ՇԱԲԱԹ, երեկոյան ժամը 7-ին, Վեհափառ Հայրապետը Հոգևոր Ճեմարանի ուսանողության դասախոսեց «Մաքրություն» թեմայի շուրջ, որը լսվեց մեծ հետաքրքրությամբ և երախտագիտությամբ։

***

ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում պատարագեց և քարոզեց արժանապատիվ Տ. Հովհաննես քահանա Մարուքյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Հավարտ սուրբ պատարագի, Վեհափառ Հայրապետի հանդիսադրությամբ կատարվեց Կառավարական մաղթանք, հավատացյալների խումն բազմության ներկայությամբ, Հայաստանում սովետական կարգերի հաստատման 38-րդ տարեդարձի առթիվ։